

Խ. Հ. ՄԵԼԻՔ-ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

ԲՈՐՐՈՍԱՅԻՆ ՋԵՐՄԻ ՄԱՍԻՆ

Ի թիվս այն բաղձաթիվ բժշկական տերմինների, որոնք դանդում են Միլթար Հերացու «Ջերմանց միլթարութիւն» գրքի մեջ, առանձին ուշադրության է արժանի «բորբոսային ջերմ» տերմինը հետևյալ պատճառներով. նախ՝ Հերացին, որը սովորություն ուներ ախտաբանական տերմինների անունները տալ երեք լեզուներով, այն է՝ հայերեն, հունարեն և արաբերեն, այս դեպքում տալիս է նրա միայն հայերեն անունը և մեզ համար պարզ չէ, թե «բորբոսային ջերմին» որ հունարեն կամ արաբերեն տերմինն է համապատասխանում: Երկրորդ՝ երբ մենք «բորբոսային ջերմը» թարգմանում ենք բառացի հին կլասիկական կամ այժմյան կենդանի լեզուներով, նկատում ենք, որ նման տերմին բացի հայերենից ուրիշ աղբյուրի գրականության մեջ գոյություն չունի: Դա է պատճառը, որ այդ խնդրի վերաբերյալ բանասերների մեջ մի միասնական կարծիք չկա: Ղ. Ալիշանը 1873 թ. յուր պատմական «Շնորհալի և պարագայք յուր» գրքի մեջ այն միտքն է արժարժել, որ Կիլիկիան վաղուց է վեր հայանի էր յուր վատառողջ կլիմայով, ուր մալարիան մինչև այսօր էլ խիստ տարածված է, և որ հայ կաթողիկոսներ՝ Ներսես Շնորհալիս և Գրիգոր Տղան տասնյակ տարիներ շարունակ տառապում էին այդ հիվանդությամբ և նրանց բուժում էր Միլթար Հերացին: Այս պատմական ավյալների հիման վրա ստեղծվել է մի կարծիք, որ «բորբոսային ջերմ» անվան տակ Մ. Հերացին նկարագրում է մալարիան:

Նորայր Բյուզանդացին այլ կարծիք ունի: Նրա կարծիքով բորբոսային ջերմը նույնն է, ինչ որ ֆրանսերեն ասում են՝ Fièvre putride, լատիներեն՝ Febris putrida, ռուսերեն՝ гнилостная лихорадка, գերմաներեն՝ Faulfieber: Ն. Բյուզանդացին եղևում

է Մ. Հերացու այն տեսակետից, որի համեմատ՝ նա Գաղիանոսի նման ջերմերը բաժանում է երեք տեսակների՝

Գաղիանոս

Մխիթար Հերացի

1. Febris quotidiana
2. Febris hectica
3. Febris putrida

1. Միօրյա ջերմ
2. Հալմաշ ջերմ
3. Բորբոսային ջերմ

Նորայր Բյուզանդացու հետ համաձայն է և Գ. Լուսինյանը։ Երկուսն էլ իրենց բառարաններում այդպես էլ թարգմանել են՝ համարելով հարցը դրանով սպառված։ Նույն տեսակետն ունի նաև Կ. Բաումայցանը։

Սակայն Վ. Թորգոմյանը չի ընդունում նրանց տեսակետը և 1899 թ. Փարիզի Բժշկական Ակադեմիայում կարդացած իր պատմական գեղուցման մեջ բորբոսային ջերմը բառացի թարգմանել է ֆրանսերեն՝ Fievre moisessure, սակայն իր բացատրության մեջ գտնում է, որ այդ հոմանիշ է այժմյան infectieuse կամ septique բառերին։

Նման տեսակետ է պաշտպանում Փարիզի Բժշկական Ակադեմիայի պրոֆ. Ֆեռանը (Ferraine), որին հանձնված էր Թորգոմյանի ուսումնասիրության քննությունը (Տ. Հ. Կոչնակ, 1925, № 21, էջ 652), էսեստ Ջայդելը (Ernest Seidel) գրտնում է, որ Հերացին նկատի է ունեցել Febris putrida, բայց նա գերադասել է փոխել կամ նկատել բառերի փոխարեն բորբոսային բառը գործածել, որը նյութանով տարբերվում է putrida-ից, հետևապես ճիշտ կլինի թարգմանել բառացի։ Եվ նա բառացի թարգմանում է Schimmelfieber: Սակայն որովհետև այդ բառացի թարգմանությունը կարող է ավելի լայն մեկնությունների առիթ դառնալ, նա զգուշությամբ ավելացնում է՝ «իհարկե, ես հեռու եմ այն մտքից, որ Հերացին այժմյան բակտերիոլոգիայի նախակարգվածն է եղել»։

Վրթանես Փափաղյանը յուր ուղևորներն մի բորբոսային գտնում է, որ բորբոսային ջերմը «болотная лихорадка», ն է. Լ. Հովհաննիսյանն յուր 1928 թ. «История медицины в Армении», գրքի մեջ բորբոսային ջերմը հաճախ թարգմանում է «воспалительная лихорадка», երբեմն էլ «порча крови, կամ брожение»։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ բորբոսային ջերմի»

մասին մի միասնական կարծիք չկա և մինչև այժմ լույս տեսած գրականության մեջ նա թարգմանվում է չորս տեսակ.

Հայերեն	Լատիներեն	Ռուսերեն	Գերմաներեն
	1. Malaria	1. болотная лихорадка	1. Sumpffieber
	2. Febr. inflammativa	2. воспалительная лихорадка	2. Entzündungsfieber
«Բորբոսային ջերմ»	3. Febr. putrida	3. гнилостная лихорадка	3. Faulfieber
	4. Febr. mucor	4. плесневая лихорадка	4. Schimmelfieber

Քանի որ այսքան տարբեր կարծիքներ կան, խիստ անհրաժեշտ է այդ հարցն ավելի մանրամասն ուսումնասիրել և պարզել, թե նրանցից որն է «բորբոսային» բառի ավելի ճիշտ իմաստը տալիս: Մենք գտնում ենք, որ «Ջերմանց մեխիթարով թիւնը» բովանդակող տվյալներ ունի խնդրի ճիշտ լուծման համար:

Ի՞նչ է հասկանում Մ. Հերացին «բորբոսային ջերմ» անվան տակ, արդյոք նա նկատի չի ունեցել մալարիան:

Հերացին մի քանի գլուխներում իրոք նկարագրում է հիվանդություններ, որոնք համապատասխանում են մալարիային, բայց այդ հիվանդություններն ամբողջապես չեն ընդգրկում բորբոսային ջերմերը: Նա բորբոսային ջերմերի մեջ է դասում նաև ծաղիկն ու նման հիվանդություններ, որոնք ոչ մի առնչություն չունեն մալարիայի հետ: Այդ տեսակետից հասկանալի է, որ Հերացին չէր կարող մալարիայի իմաստով բորբոսային ջերմեր գրած լինել:

Առաջին անգամ Հերացին «բորբոսային» բառը գործ է ածում յուր գրքի Բ գլխում: Համաձայն նախնի իմաստասերների տեսակետի, նա ջերմերը բաժանում է երեք տեսակի, առաջինը դամիօրյա ջերմն է, որի պատճառը «են հոգիք կամ շունչք», երկրորդը՝ հալմամբ ջերմն է, որի պատճառը չոր անդամներն են և երրորդը՝ «բորբոսային ջերմն» է, որի պատճառը չորս հյուսթերն են կամ չորս գիճությունները:

Այստեղից մինչև ի՞նչ գլուխը Հերացին բորբոսային ջերմի մասին միայն մի անգամ է հիշում: Իսկ ԻԴ գլխից մինչև ԽԵ գլուխը ամբողջապես նվիրված են բորբոսային ջերմին (տես

էջ 57): Նա նկարագրում է նրանց բազմաթիվ տեսակները, ազնաբերում է, որ նա արանցով զեւ բոլոր բորբոսային ջերմերը չի ամփոփում, այլ հիշատակում է միայն կարևորագույնները, ի՞նչպիսի վերնագիրն սկսում է այսպես՝ «Պատմութիւն նախագիտութեան վասն ամենայն ցեղ բորբոսային ջերմերոյն ուրիշ ուրիշ»:

Սկզբում կանգ է առնում սինտյիսոս ջերմի վրա, այն ջերմի, որ հարատեւ է լինում ու առանց նոպաների: Դրա պատճառը նա համարում է արյան բորբոսները երակներէ մեջ: «Արիւնն բորբոսի ի ներքին ի յերկսն»։ Մի քանի տող հետո կանգ է առնում ամենօրյա նոպաներով ջերմի վրա և գտնում է, որ նրա պատճառը պալլամի (մաղասի կամ խուխի) երակներից դուրս բորբոսներն է՝ «պալլամ բորբոսի դուրս ի յերակացն»։ Սրանց հետեւում են տոփտեոս ջերմը (Febris tertiana), որի պատճառը խարտեշ մաղձի երակից դուրս բորբոսներն է, «սեւ տեոտտեոս ջերմը, որի պատճառը երակից դուրս սեւ մաղձի կամ ստվտայի բորբոսներն է»:

Այնուհետեւ Հերացին պատմում է, որ ջերմերը լինում են պարզ և հոգակամ: Պարզը մի ցեղ է, իսկ հոգակամը կամ բարդը շատ ցեղեր են: Դրանք առաջ են գալիս նյութների իրար հետ զանազան կերպ խառնվելուց:

Այստեղից սկսած՝ ամբողջ գրքի մեջ նա գործ է ածում, ավելի քան հարյուր անգամ, բորբոս, բորբոսային, բորբոսել, բորբոսի, բորբոսած բառակերբ և ամեն անգամ էլ սերտորեն կապված չորս նյութների հետ: Այլ դեպքերում նա այդ բառը գործ չի ածում, Բերենք օրինակներ. «...արիւնն բորբոսի ի ներքս ի յերակսն» (էջ 56), «Սեւ մաղձին բորբոսելոյն լինի» (էջ 57), «այնչաքսն՝ որ բորբոսած լինի» (էջ 58) կամ «բորբոսածն» (էջ 65), «Ժողովին ի մեկ տեղի, ուր բորբոսել կամին» (էջ 59), «Եւ այս էր բորբոսային ջերմերոյն պատմութիւնն» (էջ 61), «Եւ բորբոս ընծայեցուցանէ» (էջ 92):

Բորբոս բառը իր հոլովածներով ավելի քան հարյուր անգամ կրկնելով, ինչպես վերև հիշեցինք, նա գործ է ածում այն՝ անմեջապես կապելով մի օրէն նյութի հետ, այն է՝ արյան սեւ ու դեղին մաղձի և պալլամի հետ, մինչդեռ այլ դեպքերում նա խուսափում է բորբոսել բառը գործածելուց, հարձեւ, այդ բառը ստեղծված է հատկապես այդ նյութների համար: Օրինակ՝ հենց նույն ի՞նչպիսիւ նկարագրում է, որ արյունն երակից դուրս մի

անդամի մեջ բորբոսած դեպքում, երակը խցվում է, այդ անդամըն ուռչում է, տաքանում, տաքությունն անցնում է հարևան անդամներին և այդ պրոցեսը, որ կարելի է ասել բորբոքային մի պրոցես, Հերացին խուսափում է կոչել բորբոքային կամ բորբոսային (էջ 59.) Մի երկրորդ օրինակ, ինչ գլխում նկարագրում է մի տեսակ ջերմ, որ առաջ է գալիս փնգմոնայի հետևանքով՝ «Հետ ախտոցին լինի դոր «փլեդմոնի ամվաճեմ» (էջ 74): Այս դեպքում ևս նա խուսափում է բորբոքել բառը գործածելու Այն տպավորությունն է ստացվում, որ Հերացին մի որևէ անդամի բորբոքվելու դեպքում գերադասում է գործածել ուռել և տաքանալ, իսկ այն պրոցեսը, որ կատարվում է հիմնական նյութերի մեջ՝ նա անվանում է միայն բորբոսել բառով: Ըստ Հերացու՝ նյութի բորբոսնելուց առաջանում է տաքություն, որը հավասար չափով տարածվում է մարմնի բոլոր մասերը, և տաքությունը մնում է մարմնի մեջ այնքան, որքան որ բորբոսումը շարունակվում է: Հենց որ բորբոսման պրոցեսը, «եփումը», վերջանում է, ջերմությունն էլ անցնում է (եփել ախտեղ խմորման իմաստով է ասված):

Մյուսը պարզ ցույց են տալիս, որ «բորբոսել», «բորբոսումըն» բառն իր հոլովածակով հրքեք Հերացին բորբոքել իմաստով գործ չի անելու: Բորբոքել բառը մեր գրականության մեջ վաղուց գործածված բառ է. նշանակում է վառել, բռնել, հրահրել, սառտվաճալ և ընդհանրապես կապված է կրակի հետ: Բայց հաճախ նա ունի նաև «գրգռել, հուզել» իմաստը: Վերջին իմաստով բորբոքել բառը գործ է անել Գրիգոր Մագիստրոսը յուր բժշկական չափադանց հակիրճ բովանդակություն ունեցող թղթերի մեջ (էջ 74): Հերացին, որ ավելի շատ առիթ ունեւր այդ բառը գործածելու և չնայած այն բանին, որ այդ բառը ծագումով և ֆոնետիկական տեսակետից շատ մոտ է բորբոսել բառին, այնուամենայնիվ խուսափում է դրանից:

Հերացու մոտ նկատվում է մի սխառնամատիկ հետևողականություն: Չնայած բորբոս բառի այնքան հաճախ գործածելուն, քայց և այնպես նա ոչ մի անգամ այդ բառը առանձին գործ չի անում, այլ միշտ կապակցված այս կամ այն նյութի հետ: Նույնը մենք նկատում ենք և Գալենի մոտ: Նյութերի վերաբերյալ նա գործ է անում՝ febris putrida բառը, իսկ հյուսվածքների կամ որևէ այլ անդամի մեջ կատարվող պրոցեսը անվանում է phlogosis.

Այստեղից պարզ երևում է, որ Հերացին բորբոսային շեր-
մը գործ է ածել Գալենի febris putrida-ի իմաստով:

Բայց այստեղ մի այլ հարց է ծագում: Եթե Հերացին իրոք
հետևում է Գալենին, ապա ինչ՞ով նա բարբոսի բառի փոխարեն
գործ չի ածել փտել կամ անխել բառերը, որոնք ավելի շատ գոր-
ծածական են և ավելի են համապատասխանում putridus բառին
կամ արարական հումայաթ էլ ուժեղանաթ բառերին: Այդ հարցը
առավել ևս բնական է դառնում, որովհետև մեր հին գրականու-
թյան մեջ հիշածն բառերն ավելի հաճախ են հանդիպում, օրի-
նակ՝ «Փտեա վաղվաղակի զամբարիշտս» (Յովբ. և. 7), «Աբար
զիս փտեալ» (Յովբ. ԺԶ 8), «Նեխեցան և փտեցան վերք իմ»
(Սաղմ. Լէ 6), «Ի նեխոյ հոտոյ զօրացն» (Մակ. Թ. 9), «Ոչ կա-
րէր վասն նեխութենէ հոգոյն» (Բ. Մակ. Թ. 10), «Զկուռք սասա-
կեցան և նեխեցաւ գետն» (Նլից. է. 21), «Նեխեալ ընկեսցի տրտա-
քոյ զբանց» (Նրեմ. ԻԲ. 19), «Մեջբերումները՝ հին կտակարանից»:

Այս դարձվածքները նա հաճախ պիտի հանդիպած լիներ
Ս. Գրքում, որին նա քաջածանոթ էր, և ընդհակառակը՝ բորբոսնի
բառին հանդիպելու այդքան առիթ չի ունեցել: Առավել ևս զար-
մանալի է, որ նա առիթ է ունեցել գործածելու անխել բառը, ԼԳ
գլխում նկարագրելով քսանթին հիվանդությունը, գրում է՝ «զո-
ղըն կրակի գունով լինի իւր հոտն անխած», քիչ հետո՝ «նեխա-
հոտութեան պատճառը նիւթի բորբոսնին է»: Պարզ է, որ Հե-
րացին անխել և բորբոսնել բառերի մեջ իմաստի տարբերություն
է դնում: Մեզը նեխում է և ունի նեխահոտություն, իսկ նյու-
թը չի նեխում, այլ բորբոսնում է: Հետևապես, ըստ Հերացու,
նեխին ու բորբոսնելը տարբեր պրոցեսներ են:

Թերևս ստացվում է այն տպավորությունը, թե նեխումը
հոտ է ունենում, իսկ բորբոսնելն առանց հոտի է լինում, բայց
այդպես չէ: Շիրք Վաստակոցի» մեջ, մի գիրք, որի թարգմանիչը
համարվում է նույն ինքը Հերացին, մենք հանդիպում ենք.
«Մահաբեր բորբոսահոտական» դարձվածքին:

Այս բոլորից հետո մեզ մնում է պարզել, թե ո՞ր պրոցեսին է
Հերացին տալիս բորբոսային անունը:

Մեզ թվում է, որ այդ հարցին որոշ պատասխան կարող են
տալ Մ. Հերացու հետևյալ տողերը.

«Կան իրուի, որ իւրեանց ընուլթիւն չորային և ցամաք,
բայց իւրեանց էուլթիւն հոսին և ծորին զերտ մեղրն ու զինին
և իւարտիշ մաղձն և աղեջուրն և այլ գոր ինչ նման են այդոց»:

«Եւ այլ կան իրուի որ իւրեանց բնութիւն և խառնուածք տաք են և գիճային, բայց էութեամբ և մարմնովն չոր լինի և պինտ զերտ գղարապղպեղն և զանապղիւն և այլ զոր նման են այդոց» (էջ 92):

Այդ իրերի մասին Հերացին գրում է, որ նրանք «հնար ու ճար ունեն» բորբոսնելու (էջ 92):

Հետեապես՝ ըստ Հերացու՝ բորբոսնում են հետեյալ իրերը. մեղրը, գինին, աղեղուրը, դաբապղպեղը, կոճապղպեղը և սրանց նման իրեր:

Իսկ մը պրոցեսն է Հերացին անվանում բորբոսային կամ բորբոսում: Այդ էլ կարող են պարզիլ հետեյալ տողերը.

«Զի օտար տաքութիւն երբ յինքն գործէ, գտանի իւր գեճ խառնուածքն, որ թուլացնէ և ծորէ և սփռէ և շարժէ դեպի ի դուրս և ետացնէ և բորբոս ընծայեցուցանէ», — այս մանրամասնութիւնը վերաբերում է գինու, մեղրի և աղեղրի բորբոսնելուն:

Իսկ զարապղպեղի և կոճապղպեղի մասին ասում է հետեւյալը.

«Օտար տաքութիւն երբ յինքն մտանէ, գտանէ ի մարմնոյն գիճութիւն, զոր կակղեցնէ և ծորեցնէ, և դեպի դուրս քաշէ և փոխէ բորբոսելն»:

Այս տողերից պարզ երևում է, որ բորբոսնելու համար անպայման պետք է գիճութիւն լինի, ապա դրսից տաքութիւն պիտի անցնի գիճութիւնը, նրան թուլացնի, որից հետո ջրային մասն իրերից տնջատվում է, դուրս է դալիս նրա մակերեսը և այնտեղ բորբոս «ընծայեցնում» (Այստեղ ետալը չպիտի ընդունել բառացիորեն. պղծականների դուրս գալը Հերացին համարում է ետալ): Ըստ այդմ՝ բորբոսնելը կատարվում է ոչ թե իրերի մեջ, այլ իրերի դրսում: Իրերը բորբոսնելիս քայքայման կամ նեխման չեն ենթարկվում: Երբ գինին բորբոսնում է, նա դեռ չի կորցնում յուր հատկութիւնը, անգամ չի քայքայում:

Նույնը վերաբերում է և մնացած իրերին: Ըստ Հերացու՝ բորբոսումը մի պրոցես է, որին ենթարկվում է մի նյութ, և հաճախ այդ պրոցեսը ինքնըստինքյան վերանում է, առանց նյութի էութիւնը փոփոխման ենթարկելու: Այդ պարզ երևում է հետեյալից. «Զերմն ի յար մինչև վճարի այն չափան, որ բորբոսած լինի և կամ եփի և կամ երկուքն հասանին, որ եփի և վճարի» (էջ 58):

Այս բուրբից պարզ երևում է, որ բորբոսային պրոցեսը չի խորանում իրերի մեջ և քայքայում իրերը: Նա վերջանում է կամ ենթակա է վերջացման: Նա նման չէ ոչ փտման և ոչ նեխման: Հերացին ոչ մի դեպքում չի ակնաբերվում, որ բորբոսանելուց հետո մի որևէ իր կարող է փտել, նեխել կամ քայքայվել:

Ահա այս մանրամասնություններից հետո հասկանալի է, թե ինչու Հերացին մի առանձին խնամքով է դործ ածում բորբոսանել բառը և չնայած առատ գործածելուն, երբեք չի շփոթում նեխելու կա՛մ փտելու հետ:

Բայ ծանոթ լինելով մեր գրականության մեջ ընդունված փտել և նեխել բառերի կիրառությանը՝ Հերացին խուսափում է դրանք գործածելուց և ավելի քան հարյուր անգամ դործ է ածում մի բառ, որն այնքան էլ տարածված չէ եղել մեր գրականության մեջ: Այդ բառն է նա ոչ առանց նպատակի:

Այդ ամենը ցույց է տալիս, որ Հերացին այլ կերպ է պատկերացնում այն պրոցեսը, ինչ որ իրենից առաջ ուրիշները նմանեցրել են փտելուն կամ նեխելուն: Հերացու բոլորը կարծես նման լինի մեր այժմյան բորբոսնել բառին: Այժմ էլ մեր ժողովուրդը չի ասի, թե հացը փտել կամ նեխել է, կամ մեղրը փտել է, գինին նեխել է:

Հերացին գտնում է, որ ամեն մի նյութ ունի հատուկ ժամանակ բորբոսանելու համար: Կան նյութեր, որոնք շուտ են բորբոսանում և շուտ «արձակում», կա և ընդհակառակը:

Արյունը հեշտ է բորբոսանում, բայց նրա հաստ երակները թույլ չեն տալիս նրան հեշտ «արձակել» — վերջանալ, նման հատկություններ ունեն և ֆնացած նյութերը:

Բորբոսային ջերմերի քանակը՝ ըստ Հերացու՝ մեծ է: Խնչպես ինքն է խոստովանում, քսաներեք գուլաների մեջ չի սպառում բոլոր բորբոսային ջերմերը, այլ նկարագրում է նրանցից կարևորները:

Հերացու այս տեսակետը համաշխարհային բժշկական պատմության մեջ միակն է: Ըստ այդմ՝ «Բորբոսային ջերմ» պետք է թարգմանել Febris mucor, fièvre moisissure, плесневая лихорадка կամ Schimmelfieber, որովհետև այդ նյութանսով Հերացին ավելի մոտ է մեր այժմյան բժշկական տեսակետին:

Խնտուխտիվ կերպով նա զգացել է, որ նյութի մեջ կատարվող պրոցեսը նման չէ փտման կամ նեխման և դրա համար էլ մի առանձին խնամքով մտցրել է այդ նրբերանգը: Նա այդ նրբ-

բերանդով յուր նախորդներէ նկատմամբ մոտենում մեր այժմյան բժշկական տեսակետին:

Ե Ձ Ր Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Մխիթար Հերացու «բորբոսային ջերմեր» դարձվածքը առաջ է բերել բանասերների մեջ մեծ տարաձայնություն: «Բորբոսային ջերմերը» թարգմանել են febris putrida, febris inflammativa, malaria և այլն:

2. Սաուդարանությունից պարզվում է, որ Հերացին չէր կարող այդ իմաստով գործածած լինել «բորբոսային ջերմեր» բժշկագիտական տերմինը:

3. Ըստ Հերացու՝ բորբոսային պրոցեսը կատարվում է նյութի մակերեսին, որի ընթացքում նյութերը առանձին փոփոխման չեն ենթարկվում:

4. Բորբոսովող նյութերը, ինչպես գինին, մեղրը, աղջուրը, պղպեղը, դարապղպեղը, կոճապղպեղը՝ ցույց են տալիս, որ բորբոսային պրոցեսը Հերացին չէր պատկերացնում փտելու կամ նեխելու իմաստով: Այդ պատճառով էլ նա այդ պրոցեսը այլ պրոցեսներից տարբերելու համար արտահայտել է նրա իմաստը «բորբոսային» տերմինով:

5. Հերացու տված այդ նրբերանգը միջնադարյան պրակտիկայի մեջ հզակի է և ավելի մոտենում է մեր այժմյան բժշկական տեսակետին, քան տվյալ հարցի համար գոյություն ունեցող մյուս տերմիններին:

6. Հերացու առաջադրած նրբերանգի առավելությունը նկատի ունենալով՝ պետք է բորբոսային ջերմերը թարգմանել բառացի այսպես՝ плесневая лихорадка, fièvre moisissure, febris mucor կամ Schimmelfieber.

Х. А. МЕЛИК-ПАРСАДАНЯН

О ТЕРМИНЕ «ПЛЕСНЕВАЯ ЛИХОРАДКА»

Известный армянский врач XII века Мхитар Герацци, в своей монографии «Утешение в лихорадках» часто употребляет термин «бորբոսային ջերմ», что дословно в переводе значит «плесневая лихорадка». Среди лиц, изучавших означенное произведение М. Герацци, нет единого мнения о том, что следует понимать под этим термином. Одни переводят его до-

словно «плесневая лихорадка», другие—«гнилостная лихорадка», «болотная лихорадка», «воспалительная лихорадка», а иногда «порча крови».

На основании разбора ряда выдержек из работы Мхитара Гераци автор приходит к выводу, что Мхитар под словом «плесень» понимал именно процесс заплеснения, и поэтому находит, что Торгомян, Феррен и Зейдель были правы, когда они переводили этот термин дословно «плесневая лихорадка» (по-французски *levre moisissure* и по-немецки *Schimmelfieber*).

Далее автор находит, что термин этот несомненно, более близок к современным воззрениям на сущность лихорадочных заболеваний, нежели употреблявшиеся средневековыми врачами другие обозначения для этой лихорадки.